Կարգապահական գործ թիվ ԿԳ-17055

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 174-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/103-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐՇԱԿ ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Մելանյա Առուստամյանի, Խորհրդի անդամներ՝ Հրանտ Անանյանի, Սիմոն Բաբայանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարդարյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Արշակ Թովմասյանի (արտոնագիր թիվ 790) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

ՊԱՐԶԵՑ՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

28.06.2017թ. Պալատ մուտքագրվել է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի **(այսուհետ՝ նաև Դատարան կամ Դիմող)** դատավոր Դ. Բալայանի՝ «Պաշտպանի նկատմամբ դատական սանկցիա կիրառելու մասին» 23.06.2017թ. որոշումը **(այսուհետ՝ Որոշում)**, որում նշվել է, որ 2017 թվականի մայիսի 19-ին դատական նիստի ժամանակ պաշտպան Արշակ Թովմասյանը խնդրել է հետաձգել դատական նիստը ամբաստանյալի հոր մահվան վկայականը և մոր հիվանդության վերաբերյալ փաստաթղթերը ներկայացնելու համար: Վերջինս հայտնել է, որ մեկնում է Հայաստանի Հանրապետությունից և նրա հետ դատական նիստի օրը համաձայնեցնելով, հաջորդ դատական նիստը նշանակվել է հունիսի 7-ին՝ ժամը 16:30-ին:

2017 թվականի հունիսի 7-ի ժամը 16:30-ի դատական նիստին պաշտպանը չի ներկայացել՝ դատարանին անհայտ պատճառով: Նիստը նախագահողը հայտարարել է 20 րոպե ընդմիջում, սակայն վերջինս այդպես էլ չի ներկայացել, ինչի հետևանքով էլ դատական նիստը հետաձգվել է և նշանակվել հունիսի 23-ին՝ ժամը 12:30-ին:

2017 թվականի հունիսի 12-ին պաշտպան Արշակ Թովմասյանը պատշաճ կերպով ծանուցված լինելով հունիսի 23-ին՝ ժամը 12:30-ին կայանալիք դատական նիստի վերաբերյալ, կրկին չի ներկայացել դատական նիստին ու դատարանին չի տեղեկացրել իր բացակայության մասին:

Դատարանը՝ խորհրդակցական սենյակում քննության առնելով պաշտպան Արշակ Թովմասյանի դրսևորած վարքագիծը, ինչի հետևանքով ձախողվել է երկու դատական նիստ, գտել է, որ փաստաբան Արշակ Թովմասյանն անհարգելի չի կատարել իր դատավարական պարտականությունները, ինչով և անհարգալից վերաբերմունք է դրսևորել դատարանի և դատավարության մասնակիցների նկատմամբ:

Որոշմամբ նաև նշվել է, որ պաշտպանը, դատարան չներկայանալով, ըստ էության, նպաստել է տվյալ քրեական գործի հետ առնչվող անձանց գործի արդարացի քննության իրավունքի, այն է՝ ողջամիտ ժամկետում իր շահերին առնչվող քրեական գործի քննության իրավունքի խախտմանը: Ընդ որում, ամբաստանյալ Գևորգ Բախշյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրված կալանավորումը:

Դատարանը 23.06.2017թ. կայացրել է «*Պաշտպանի նկատմամբ դատական սանկցիա կիրառելու մասին*» որոշում, որով որոշել է. *«Դիմել ՀՀ փաստաբանների պալատին պաշտպան Արշակ Թովմասյանին պատասխանատվության ենթարկելու համար»:*

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 27.07.2017թ. թիվ 212-Ա/ԿԳ-17055 որոշմամբ փաստաբան Արշակ Թովմասյանի (արտոնագիր թիվ 790) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4 որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագիրք)** 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով:

31.07.2017թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Ռիմա Մխիթարյանին:

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Դիմողը նախապատրաստման փուլում բացատրություն չի ներկայացրել: Խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի և ժամի մասին:

<u>3.2.Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>

Պատասխանողը նախապատրաստողին ներկայացրել է բացատրություն այն մասին, որ Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում գտնվող թիվ ԵՇԴ/0048/01/17 քրեական գործով հանդիսացել է ամբաստանյալ Գևորգ Բախշյանի պաշտպանը, նշված գործով դեռևս նախաքննության ընթացքում իրեն դիմել է պաշտպանյալի մորեղբայր Սերգեյ Աբրահամյանը, որի պաշտպանությունը ևս մեկ այլ քրեական գործով իրականացրել է ինքը: Փաստաբանը նշել է, որ նախաքննության ընթացքում ինքը մասնակցել է բոլոր դատավարական գործողություններին (բազմիցս այցելել է մեկուսարան, մասնակցել խափանման միջոց ընտրելու դատարանի քննարկումներին և այլն): Մինչ պաշտպանությունը ստանձնելը, Ս.Աբրահամյանի հետ պայմանավորվել է կնքել պայմանագիր՝ ծառայությունների մատուցման վերաբերյալ, սակայն վերջինս անընդհատ տարբեր

պատճառաբանություններով ձգձգել է պայմանագրի ստորագրումը, չնայած դրան, մասնակցել է նաև դատաքննության երկու նիստերին:

Փաստաբանը նաև նշել է, որ 23.06.2017թ. դատական նիստը հետաձգվել է իր միջնորդությամբ, որպեսզի հնարավորություն ունենան հաջորդ նիստին ներկայացնելու իր պաշտպանյալի անձը բնութագրող և արարքը մեղմացնող համապատասխան փաստաթղթեր: 07. 06. 2017 թվականի դատական նիստին չի մասնակցել, քանի որ անձնական խնդիրներով գտնվել է ՌԴ-ում և վերադարձել է Երևան 08. 06. 2017 թվականին՝ չհասցնելով մասնակցել դատական նիստին: Հաջորդ դատական նիստին՝ 23.06.2017 թվականին, չի ներկայացել, քանի որ մինչ այդ բազմաթիվ զանգեր է կատարել Ս. Աբրահամյանին՝ անհրաժեշտ փաստաթղթերը նրանից ստանալու նպատակով, սակայն վերջինս չի պատասխանել զանգերին, իսկ հետո հայտնել է, որ պաշտպանյալ Գ. Բախշյանի ցանկությամբ այլ պաշտպան է ներգրավվել, իր ծառայություններից չեն հրաժարվում, սակայն դատավարությանը պետք է մասնակցի նոր պաշտպանը, իսկ ինքը միայն հետո է իմացել, որ իրեն խաբել են:

Այնուամենայնիվ, փաստաբանն ընդունել է իր մեղքը, գտել, որ դատարանի որոշումն իրավաչափ է և ինքը ենթակա է պատասխանատվության

Պատասխանողը սույն կարգապահական գործով հրավիրված նիստին չի ներկայացրել և այլ դիրքորոշում, քան վերոգրյալն է, չի ներկայացրել:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

20.09.2017թ. կարգապահական վարույթի գործը նախապատրաստողը կազմել է եզրակացություն, որում, ներկայացնելով սույն կարգապահական գործի շրջանակներում պարզաբանման ենթակա հարցերը, կողմերի դիրքորոշումները և գործի համար նշանակություն ունեցող փաստերը, հայտնել է, որ փաստաբանի վարքագծի խախտման վերաբերյալ վերջնական որոշումը ենթակա է կայացման Խորհրդի կողմից:

Գործը հանձնվել է Խորհրդին 26.09.2017 թվականին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2017 թվականի նոյեմբերի 21-ին, ժամը՝ 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» **(այսուհետ՝ Կարգ)** 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

- Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության

առաջին ատյանի դատարանի վարույթում քննվող թիվ ԵՇԴ/0048/01/17 քրեական գործով 2017 թվականի մայիսի 19-ին հրավիրված դատական նիստի ժամանակ մեղադրյալ Գևորգ Բախշյանի պաշտպան Արշակ Թովմասյանը խնդրել է հետաձգել դատական նիստը ամբաստանյալի հոր մահվան վկայականը և մոր հիվանդության վերաբերյալ փաստաթղթերը ներկայացնելու համար: Վերջինս հայտնել է, որ մեկնում է ՀՀ-ից և նրա հետ դատական նիստի օրը համաձայնացնելով, հաջորդ դատական նիստը նշանակվել է հունիսի 7-ին՝ ժամը 16:30-ին:

- 2017 թվականի հունիսի 7-ի ժամը 16:30-ի դատական նիստին պաշտպանը չի ներկայացել՝ դատարանին անհայտ պատճառով: Նիստը նախագահողը հայտարարել է 20 րոպե ընդմիջում, սակայն վերջինս այդպես էլ չի ներկայացել, ինչի հետևանքով էլ դատական նիստը հետաձգվել է և նշանակվել հունիսի 23-ին՝ ժամը 12:30–ին:
- 2017 թվականի հունիսի 12-ին պաշտպան Ա.Թովմասյանը պատշաճ կերպով ծանուցված լինելով հունիսի 23-ին՝ ժամը 12:30-ին կայանալիք դատական նիստի վերաբերյալ, կրկին չի ներկայացել դատական նիստին ու դատարանին չի տեղեկացրել իր բացակայության մասին:

Նշված փաստերը հաստատվում են դատական սանկցիա կիրառելու մասին որոշմամբ, պատասխանողի բացատրությամբ:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 21.11.2017թ. տրամադրված N ԸԴՂ/ԿԳ/758-17 տեղեկանքի համաձայն՝ Արշակ Թովմասյանը փաստաբան է հանդիսանում 22.04.2008թ-ից և 2008-2017թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 1 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ՝ անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու հիմքով, որը կարճվել է:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Արշակ Թովմասյանին Կանոնագրքի 4.1 կետի պահանջները խախտելու համար պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության, հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի **(այսուհետ նաև՝ Օրենք)** 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար*:

Օրենքի 39.[1]-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթներն են՝ … պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով փաստաբանների պալատին դիմելու մասին **դատարանի սանկցիան**:*

Նույն հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ կարգապահական վարույթ հարուցելու հիմքն է փաստաբանի արարքի մեջ սույն օրենքի կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված պահանջների խախտման հատկանիշների առերևույթ առկայությունը:

Կարգի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթներն են՝ …

պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով փաստաբանների պալատին դիմելու մասին դատարանի սանկցիան:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 314.1 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը սահմանում է. *«Դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելու կամ դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվելու կամ դատավարական պարտականություններն անհարգելի չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, դատավորի օրինական կարգադրությունները չկատարելու, դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու կամ նիստի կարգը խախտող այլ գործողություն կատարելու միջոցով դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու դեպքում դատարանն իրավունք ունի քրեական դատավարությանը մասնակցող անձանց և դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց նկատմամբ կիրառելու հետևյալ սանկցիաները .... 4) պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով համապատասխանաբար գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատ դիմելը»:*

Նույն հոդվածի 7-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ *նույն հոդվածի առաջին մասի 4-րդ կետով նախատեսված դատական սանկցիան պարտադիր հիմք է դատախազի կամ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար:*

Նշված իրավական նորմերից հետևում է, որ դատական սանկցիան կարգապահական վարույթ հարուցելու առիթ է և հիմք:

Տվյալ դեպքում դատական սանկցիայում նշված և փաստաբան Արշակ Թովմասյանին վերագրվող վարքագիծը կարգավորող կանոնը նախատեսված է Կանոնագրքի 4.1 կետով (Վարվելակերպի կանոնները դատարանում), համաձայն որի՝ ***փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում՝ հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ***:

Նշված կանոնը նաև վկայակոչող (բլանկետային) է, քանի որ հղում է կատարում փաստաբանի և դատարանի փոխհարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտին, տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին:

Մասնավորապես՝ նույն օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *պաշտպանը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին իրավաբանական օգնություն ցույց տալու համար ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով*:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով:*

Սույն գործի փաստերը գնահատելով վերոգրյալ իրավական նորմերի համատեքստում՝ Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Արշակ Թովմասյանը, թիվ ԵՇԴ/0048/01/17քրեական գործի շրջանակներում հանդիսանալով մեղադրյալ Գևորգ Բախշյանի պաշտպանը, պարտավոր էր դատարանի կանչով ներկայանալ 23.06.2017 թվականին հրավիրված դատական նիստին՝ պատշաճ ծանուցված լինելով դրա ժամանակի և վայրի մասին, պարտավոր էր դատարանի կանչով ներկայանալ rորպիսի հանգամանքն իր բացատրությամբ ընդունել է նաև Պատասխանողը: Խորհուրդը արձանագրում է նաև, որ Պատասխանողը դատարանին չի տեղեկացրել իր բացակայության պատճառների մասին:

Նման պայմաններում Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Արշակ Թովմասյանի թիվ ԵՇԴ/0048/01/17 քրեական գործով առանց հարգելի պատճառի դատական նիստին չի ներկայացել՝ դրանով իսկ դրսևորելով անհարգալից վերաբերմունք դատարանի նկատմամբ, հետևաբար ենթակա է պատասխանատվության Կանոնագրքի 4.1 կետի պահանջները խախտելու համար:

Փաստաբան Արշակ Թովմասյանի նկատմամբ նշանակվելիք կարգապահական տույժի տեսակն ընտրելիս Պալատի խորհուրդը հաշվի է առնում թույլ տրված խախտման բնույթը, փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները, փաստաբանի կողմից իր մեղքն ընդունելու հանգամանքը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով, Պալատի խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1.Փաստաբան Արշակ Թովմասյանին, (արտոնագիր 790) ճանաչել մեղավոր Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 կետի խախտման համար:

2. Փաստաբան Արշակ Թովմասյանի (արտոնագիր 790) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Արշակ Թովմասյանին և դիմողին:

<u>Ծանոթություն</u>. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկ ամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Մելանյա Առուստամյան